ԿԱՍՊԻՑ ԾՈՎԻ ԳԱԶԻ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԽՆԴԻՐԸ ԹՈՒՐՔԻԱ-ՎՐԱՍՏԱՆ-ԱԴՐԲԵՋԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

ԷՐԻԿ ԴԱՎԹՅԱՆ

Կասպից ծովի էներգետիկ ռեսուրսների արտահանման հարցը 1990-ական թթ.-ից դարձել է երկկողմ և բազմակողմ մի շարք բանակցությունների առարկա, որոնցում ընդգրկվել են ոչ միայն տարածաշրջանի պետությունները, այլև ԱՄՆ-ն, ԵՄ-ն և միջազգային նավթագազային մի շարք ընկերություններ: Այդ բանակցությունների բաղկացուցիչ մաս է կազմել ադրբեջանական գազի արտահանման հարցը, որը (ադրբեջանական նավթի հետ մեկտեղ) հիմք դարձավ Թուրքիա-Վրաստան-Ադրբեջան եռակողմ համագործակցության հաստատման համար: Ուստիև անհրաժեշտ է ուսումնասիրել Բաքու-Թբիլիսի-Էրզրում (ԲԹԷ) գազամուղի հարցում երեք երկրների էներգետիկ համագործակցության ձևավորումն ու զարգացման դինամիկան, դրանում առկա խնդիրները, պետություններից յուրաքանչյուրի շահերը, գնահատել այդ համագործակցության վրա ԱՄՆ-ի և ԵՄ-ի ազդեցությունը, դիտարկել անդրկասպյան գազամուղի նախագծման փուլում կատարված զարգացումները երեք երկրների էներգետիկ համագործակցության տեսանկյունից:

Ադրբեջանական գազի արտահանման հարցը և Թուրքիա-Վրաստան-Ադրբեջան էներգետիկ համագործակցությունը – Ադրբեջանական գազի արտահանման հարցը Թուրքիայի, Վրաստանի և Ադրբեջանի միջև սկսեց քննարկվել 1999 թ.-ից հետո, երբ ադրբեջանական Շահ Դենիզի հանքավայրում հայտնաբերվեցին գազի մեծ պաշարներ[1]: Առաջին քայլերն արվեցին 2001 թվականին, երբ մարտի 12-ին Ադրբեջանի և Թուրքիայի նախագահների կողմից ստորագրվեց միջկառավարական համաձայնագիր, որով Ադրբեջանը պարտավորվեց Վրաստանի տարածքով Թուրքիա արտահանել տարեկան մինչև 6.6 միլիարդ խմ գազ[2], իսկ նույն թվականի սեպտեմբերի 29-ին Հ. Ալիևը և Վրաստանի նախագահ Էդուարդ Շևարդնաձեն ստորագրեցին միջկառավարական համաձայնագիր ԲԹԷ գազամուղով գազի տարանցման, փոխադրման և վաճառքի մասին[3]: Այն, որ համաձայնագրերը ստորագրվել են նախագահների մակարդակով, վկայում է, որ նախագիծը առանցքային նշանա-

[1] Տե՛ս **Bahgat G.**, American Oil Diplomacy in the Persian Gulf and the Caspian Sea, University Press of Florida, 2003, էջ 145:

[2] Տե՛ս «Agreement between the Republic of Turkey and the Azerbaijan Republic Concerning the Delivery of Azerbaijan Natural Gas to the Republic of Turkey», March 12, 2001, Ankara, էջ 2:

[3] Տե՛ս Agreement between Georgia and the Republic of Azerbaijan Relating to the Transit, Transportation and Sale of Natural Gas in and beyond the Territories of Georgia and the Republic of Azerbaijan through the South Caucasus Pipeline System, September 29, 2001, Baku, էջ 6:

կություն ուներ բոլոր երեք պետությունների համար:

Թուրք-վրաց-ադրբեջանական նոր ձևավորվող համագործակցության առումով կարևոր է դիտարկել 2006 թ. գազի սակագնի շուրջ ծագած ռուս-վրացական ճգնաժամը: Ռուսական «Գազպրոմ» ընկերությունը հայտարարեց Վրաստանին մատակարարվող գազի գրեթե կրկնակի թանկացման մասին[4], որից հետո վերջինս սկսեց գազի ներկրման այլ աղբյուրներ փնտրել: Խնդրի լուծման տարբերակ էր համարվում 2007 թ. Շահ Դենիզից Թուրքիային հասանելիք գազի վերաբաշխումը Վրաստանի և Ադրբեջանի միջև, ինչը և քննարկվեց 2006 թ. դեկտեմբերի 8-ին Բաքվում երեք պետությունների էներգետիկայի նախարարների հանդիպման ընթացքում[5]:

Վրաստանում ծագած գազային ճգնաժամն առանձնացավ մի քանի առումներով: Թեպետ Վրաստանը ի վերջո ստիպված եղավ 2007 թվականի համար ռուսական գազ գնել, նշանակալից էր այն, որ Վրաստանին գազով ապահովելու խնդիրը բարձրացվեց Թուրքիա-Վրաստան-Ադրբեջան համագործակցության մակարդակ և փորձ արվեց լուծում գտնել երեք պետությունների համատեղ ջանքերով: Բացի այդ՝ ռուսական գազի ներմուծումը աստիճանաբար նվազեցվեց՝ ի հաշիվ ադրբեջանական գազի, ինչի շնորհիվ Ադրբեջանը մենաշնորհային դիրք ստացավ Վրաստանի գազային շուկայում:

ԲԹԷ գազամուղը ամբողջությամբ գործարկվեց 2007 թ. հուլիսին[6]՝ դառնալով եռակողմ համագործակցության հենասյուներից մեկը, իսկ գրեթե մեկ տարի անց Թուրքիայի և Ադրբեջանի միջև որոշ հարցերի շուրջ առաջացան լուրջ տարաձայնություններ, որոնց պատճառով Թուրքիա-Վրաստան-Ադրբեջան համագործակցությունը 2008-2010 թթ. հայտնվեց լճացման շրջանում: Անհամաձայնությունը վերաբերում էր Թուրքիայի տարածքով եվրոպական շուկա ադրբեջանական գազի արտահանմանը, քանզի տարանցման դիմաց Թուրքիան ցանկանում էր ադրբեջանական գազը գնել համեմատաբար էժան գնով և վերավաճառել այլ շուկաներում, ինչն անընդունելի էր Ադրբեջանի համար[7]: Բացի այդ՝ երկկողմ հարաբերությունները բավականին սրվեցին նաև Հայաստանի և Թուրքիայի միջև 2008 թ. մեկնարկած «ֆուտբոլային դիվանագիտության» գործընթացի և հատկապես 2009 թ. հոկտեմբերին Ցյուրիխում ստորագրված արձանագրությունների հետևանքով:

Ի պատասխան դրա՝ Ադրբեջանը քայլեր ձեռնարկեց սեփական գազի արտահանման համար այլընտրանքային շուկաներ գտնելու ուղղութ-

---

[4] Տե՛ս **Shiriyev Z., Kakachia K.,** Azerbaijan-Georgian Relations: The Foundations and Challenges of the Strategic Alliance, SAM Review, Special Double Issue, Volume 7-8, 2013, Baku, էջ 50:

[5] Տե՛ս «Министры энергетики Азербайджана, Турции и Грузии встретились в Тбилиси», http://azertag.az/ru/xeber/MINISTRY_ENERGETIKI_AZERBAIDZHANA_TURCII_I_GRUZII_VSTRETILIS_V_TBILISI-656310 (հասանելի է առ 11.05.2017 թ.):

[6] Տե՛ս T.C. Enerji ve tabii kaynaklar bakanlığı 2007 yılı faaliyet raporu, էջ 45:

[7] Տե՛ս **Denison M.**, The EU and Central Asia: Commercialising the Energy Relationship, EUCAM, Working Paper, 2009, էջ 6:

յամբ: 2009 թ. Ադրբեջանը համաձայնագրեր կնքեց Ռուսաստանի և Իրանի հետ 2010 թ. 500 միլիոն խմ գազ արտահանելու մասին[8], իսկ նույն թվականի ապրիլի 13-ին Բուխարեստում Ադրբեջանի, Վրաստանի և Ռումինիայի միջև ստորագրվեց փոխըմբռնման հուշագիր գազի փոխադրման ոլորտում համագործակցության մասին[9]: Նման քայլերով Ադրբեջանը ցանկանում էր ընդգծել, որ կախվածություն չունի Թուրքիայից և տարանցման հարցը չկարգավորելու դեպքում կարող է գազն արտահանել այլ ուղղություններով: Բացի այդ՝ նման շրջադարձը կհանգեցներ Թուրքիա-Վրաստան-Ադրբեջան էներգետիկ համագործակցության թուլացման:

Թուրքիայի տարածքով ադրբեջանական գազը Եվրոպա արտահանելու հարցում առաջընթաց նկատվեց միայն 2010-2011 թթ.: Դա պայմանավորված էր թուրք-ադրբեջանական տարաձայնությունների հարթմամբ, ինչի վկայությունն էր 2010 թ. հունիսին Ստամբուլում ձեռք բերված համաձայնությունը գազի գնի և տարանցման հարցի շուրջ[10]: Պայմանավորվածություններն էլ ավելի ամրապնդվեցին Շահ Դենիզի հանքավայրի երկրորդ փուլի գործարկումից ստացվելիք գազի վաճառքի և տարանցման հարցերի մասին 2011 թ. հոկտեմբերի 25-ի և դեկտեմբերի 24-ի թուրք-ադրբեջանական համաձայնագրի և փոխըմբռնման հուշագրի շնորհիվ[11]:

Այս առումով առանցքային նշանակություն ունեցավ 2012 թ. հունիսի 26-ին թուրք-ադրբեջանական միջկառավարական համաձայնագիրը Անդրանատոլիական գազամուղ (TANAP) կառուցելու մասին, որը սկզբնական շրջանում նախատեսում էր Վրաստանի տարածքով Թուրքիա և Եվրոպա արտահանել տարեկան 16 միլիարդ խմ գազ[12]: Դա լուրջ հաջողություն էր Ադրբեջանի համար, քանի որ, ըստ համաձայնագրի, նրան պետք է պատկաներ գազամուղի բաժնեմասերի առնվազն 51 %-ը, ինչը երաշխավորեց Ադրբեջանի գերակա դիրքը այդ խողովակաշարի նկատմամբ և ամրապնդեց նրա կշիռը ոչ միայն Թուրքիայի էներգետիկ շուկայում, այլև Հարավային գազային միջանցքում (ՀԳՄ):

Թուրք-ադրբեջանական տարաձայնությունների հարթումը նպաստեց ՀԳՄ նախագծի առաջընթացին, որը զուգակցվեց երեք երկրների էներգետիկ համագործակցության ակտիվացմամբ: 2014 թ. սեպտեմբերի

---

[8] Տե՛ս **Cutler R. M.**, Azerbaijan's Place in Euro-Caspian Energy Security, F. Ismailzade and G. E. Howard (eds.), *The South Caucasus 2021: Oil, Democracy and Geopolitics*, The Jamestown Foundation, 2012, էջ 115-116:

[9] Տե՛ս «Information on the signing of trilateral (Azerbaijan-Georgia-Romania) Memorandum of Understanding on the cooperation in the field of LNG and its transportation», http://romania.mfa.gov.ge/index.php?lang_id=ENG&sec_id=595&info_id=6763 (հասանելի է առ 26.04.2017 թ.):

[10] Տե՛ս **Ratner M., Belkin P., Nichol J., Woehrel S.**, Europe's Energy Security: Options and Challenges to Natural Gas Supply Diversification, Congressional Research Service, 2013, էջ 15:

[11] Տե՛ս «T.C. Enerji ve tabii kaynaklar bakanlığı 2011 yılı faaliyet raporu», էջ 71:

[12] Տե՛ս «Intergovernmental Agreement between the Government of the Republic of Turkey and the Government of the Republic of Azerbaijan Concerning the Trans Anatolian Natural Gas Pipeline System», June 26, 2012, Istanbul, էջ 7:

20-ին Բաքվում տեղի ունեցավ ՀԳՄ-ի հիմնարկեքի արարողությունը, որին մասնակցեցին Թուրքիայի էներգետիկայի նախարար Թաներ Յըլդըզը և Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին[13]: Ամիսներ անց՝ 2015 թ. մարտի 17-ին, Կարսում տեղի ունեցավ TANAP-ի շինարարության մեկնարկի պաշտոնական արարողությունը[14], որով ադրբեջանական գազը եվրոպական շուկա արտահանելու խնդիրը ավելի գործնական բնույթ ստացավ՝ նոր հեռանկարներ բացելով երեք երկրների հարաբերությունների համար:

Շահ Դենիզի հանքավայրի գազի արտահանման շուրջ եռակողմ համագործակցությունը առանցքային նշանակություն ունի նախ և առաջ այդ պետությունների էներգետիկ պահանջարկի բավարարման տեսանկյունից: Վրաստանը հնարավորություն ստացավ ԲԹԷ խողովակաշարով տարանցվող գազի 5 %-ը ստանալու անվճար, ևս 500 միլիոն խմ՝ զեղչված գներով[15], իսկ ՀԳՄ-ի գործարկումից հետո անվճար ստանալու ևս 1 միլիարդ խմ գազ[16]: 2015 թ. Թուրքիա ներմուծված գազի ընդամենը 12.7 %-ն է մատակարարել Ադրբեջանը, իսկ գազի պահանջարկի աճի տեմպերով Թուրքիան աշխարհում երկրորդն է[17], հետևաբար ադրբեջանական գազի ներկրումների ավելացումը թուրքական տնտեսության համար ունի կարևոր նշանակություն:

Բացի այդ, եռակողմ համագործակցությունը որոշակի դերակատարություն ունի Թուրքիայի՝ տարածաշրջանային էներգետիկ հանգույցի վերածվելու քաղաքականության տեսանկյունից: Հիմնվելով նավթի ու գազի մի շարք խոշոր հանքավայրերին աշխարհագրորեն մոտ լինելու հանգամանքի վրա՝ 2009 թ. Թուրքիայի ընդունած էներգետիկ ռազմավարությունում ամրագրվեց, որ Թուրքիան՝ որպես էներգետիկ հանգույց, աճող դեր ունի տարածաշրջանում, և ընդգծվեց Կասպից ծովի գազը ու նավթը Եվրոպա փոխադրելու կարևորությունը[18]:

Վրաստանը եռակողմ էներգետիկ համագործակցությունը դիտում է նաև որպես եվրոպական ինտեգրման քաղաքականության դրսևորում և ԵՄ-Վրաստան հարաբերությունների մերձեցման միջոց: Ըստ Վրաստանի 2015-2018 թթ. արտաքին քաղաքականության ռազմավարության՝ ԵՄ էներգամատակարարման դիվերսիֆիկացման գործընթացում Վրաստա-

---

[13] Տե՛ս ս ա ք ա ր թ վ ե լ ո ս տ ա ծ ի ջ ա ր ա ն ա ն ա ն

նի ներգրավումը դասվեց ԵՄ-ին Վրաստանի ինտեգրման նպատակով իրականացվելիք քայլերի շարքին[19]: Դառնալով մի շարք խողովակաշարերի համար տարանցման տարածք՝ Վրաստանը ձգտում է իր ներդրումն ունենալ ԵՄ էներգետիկ անվտանգության համակարգում և վերջինիս համար լինել վստահելի գործընկեր:

Ադրբեջանի համար Թուրքիայի և Վրաստանի հետ համագործակցությունը կարևորվում է ոչ միայն գազի վաճառքից ստացվող եկամուտների, այլև այդ արտահանման քաղաքական նշանակության տեսանկյունից: Լինելով փոքր պետություն՝ Ադրբեջանը կարևոր դեր ստանձնեց ոչ միայն առանձին պետությունների էներգետիկ անվտանգությունում, այլև տարածաշրջանային գործընթացներում: Այս հանգամանքը Ադրբեջանը օգտագործում է իր դերն ու հեղինակությունը բարձրացնելու նպատակով, հետևաբար պատահական չէ, որ 2016 թ. ապրիլին Ն. Ալիևը Ադրբեջանը անվանեց Եվրոպայի էներգետիկ անվտանգության «հիմնական երաշխավորների մեկը» և կարևոր գործընկեր տարածաշրջանային և նույնիսկ գլոբալ գործընթացներում[20]:

Անդրկասպյան գազամուղի նախագիծը եռակողմ էներգետիկ համագործակցության համատեքստում – Թուրքմենստանը, գազի պաշարներով էապես գերազանցելով Ադրբեջանին, մեծ հետաքրքրություն է ներկայացնում Թուրքիայի և ԵՄ-ի համար, ուստի թուրքմենական գազը հարավկովկասյան տարածաշրջանով արտահանելու հեռանկարը վերոնշյալ երեք պետությունների էներգետիկ համագործակցությունը կարող է հասցնել որակապես նոր մակարդակի՝ շնորհիվ տարանցիկ գործառույթի ամրապնդման:

Ինչպես նշվեց, Շահ Դենիզի պաշարները հայտնաբերվեցին միայն 1999 թ., ուստի մինչ այդ երեք երկրների հարաբերություններում առանցքային տեղ էր զբաղեցնում թուրքմենական գազի տարանցման խնդիրը: 1998 թ. մարտի 2-ին Ստամբուլում Թուրքիայի, Վրաստանի, Ադրբեջանի, Ղազախստանի և Թուրքմենստանի արտգործնախարարները ստորագրեցին համատեղ կոմյունիկե, որով կողմերը հավանություն տվեցին նավթն ու գազը Թուրքիայի, Վրաստանի և Ադրբեջանի տարածքով արտահանելու գաղափարին[21]: Նմանատիպ դրույթներ էր պարունակում նաև նույն թվականի հոկտեմբերի 29-ին Անկարայում Թուրքիայի, Ղազախստանի, Վրաստանի, Ուզբեկստանի և Ադրբեջանի նախագահների ստորագրած հռչակագիրը[22]:

---

[19] Տե՛ս საქართველოს საგარეო პოლიტიკის სტრატეგია 2015-2018 წწ., http://www.mfa.gov.ge/MainNav/ForeignPolicy/ForeignPolicyStrategy/სტრატეგიული-ამოცანები-და-მიზნები.aspx#str_m_04 (հասանելի է առ 28.04.2017 թ.):

[20] Տե՛ս «Под председательством Ильхама Алиева состоялось заседание кабинета министров, посвященное итогам первого квартала года и предстоящим задачам», http://ru.president.az/articles/18994 (հասանելի է առ 29.04.2017 թ.):

[21] Տե՛ս «Joint Communique on the oil and Gas Resources of the Caspian Sea Basin March 2», 1998, http://www.mfa.gov.tr/joint-communique-on-the-oil-and-gas-resources-of-the-caspian-sea-basin__br_march-2__1998.en.mfa (հասանելի է առ 01.05.2017 թ.):

[22] Տե՛ս «The Ankara Declaration», October 29, 1998, http:/www.mfa.gov.tr/turkce/gruph/hk/98/10.html (հասանելի է առ 01.05.2017 թ.):

Այս հարցի քննարկումներն ակտիվացան նաև Թուրքիա-Վրաստան-Ադրբեջան բուն համագործակցության օրակարգում: 1998 թ. ապրիլի 26-ին Տրապիզոնում երեք պետությունների նախագահների ստորագրած հռչակագրով կողմերը պատրաստակամություն հայտնեցին քայլեր ձեռնարկելու Կասպից ծովի գազը Ադրբեջանի և Վրաստանի տարածքով Թուրքիա արտահանելու համար, իսկ 1999 թ. նոյեմբերի 18-ին Ստամբուլում Բաքու-Թբիլիսի-Ջեյհան (ԲԹՋ) նավթամուղի մասին միջկառավարական եռակողմ համաձայնագրի հետ մեկտեղ այդ երկրները և Թուրքմենստանը ստորագրեցին հռչակագիր անդրկասպյան խողովակաշարի մասին[23]:

Թեպետ 1998-1999 թթ. ստորագրված փաստաթղթերը հռչակագրային բնույթի էին և սահմանափակվում էին միայն քննարկվող հարցի շուրջ համագործակցելու պատրաստակամության մասին դրույթներով, այդուհանդերձ դրանք կարևոր քայլեր էին երեք երկրների ոչ միայն էներգետիկ, այլև առհասարակ եռակողմ համագործակցության ձևավորման առումով: Այդ է վկայում այն փաստը, որ չնայած փաստաթղթերը ստորագրող պետությունների կազմը փոփոխվեց, Թուրքիան, Վրաստանը և Ադրբեջանը ստորագրել են վերոնշյալ բոլոր փաստաթղթերը: Փաստորեն ձևավորվել էր համագործակցության յուրատեսակ ձևաչափ, որի շրջանակներում երեք պետությունները Կասպից ծովի էներգետիկ ռեսուրսների արտահանման հարցի շուրջ փոխգործակցում էին շահագրգիռ մի շարք պետությունների հետ:

Այս գործընթացներն առաջընթաց գրեթե չարձանագրեցին, և անդրկասպյան գազամուղի նախագիծը փաստացի հայտնվեց փակուղում: Խնդիրը բարդացնում էր այն, որ Ադրբեջանը և Թուրքմենստանը վիճելի են համարում Կասպից ծովում գտնվող Քյափազի (Սարդարի) նավթի հանքավայրի պատկանելությունը, որի պատճառով երկկողմ հարաբերությունները 2000-ական թթ. առաջին կեսին բավականին սրվեցին՝ 2001 թ. անգամ հանգեցնելով Ադրբեջանում Թուրքմենստանի դեսպանության փակմանը[24]: Թեպետ հետագայում երկկողմ հարաբերությունները զգալիորեն բարելավվեցին, հանքավայրի շուրջ տարաձայնությունները դեռևս չեն հարթվել և կարող են հանգեցնել ճգնաժամային նոր իրավիճակների՝ այդպիսով ստվեր նետելով նաև երկու պետությունները կապող գազամուղի կառուցման հեռանկարի վրա:

Թուրքմենական գազի արտահանման խնդիրը դիտարկելով Թուրքիա-Վրաստան-Ադրբեջան էներգետիկ համագործակցության տեսանկյունից՝ հարկ է նկատել, որ այս հարցում երեք պետությունների

---

[23] Տե՛ս Joint statement of the Presidents of Azerbaijan, Georgia and Turkey issued at Trabzon, Turkey, on 26 April 1998, p. 2; Agreement between the Republic of Turkey and the Azerbaijan Republic Concerning the Delivery of Azerbaijan Natural Gas to the Republic of Turkey, March 12, 2001, Ankara, էջ 2:

[24] Տե՛ս **Canzi G.**, Turkmenistan's Caspian resources and its international political economy, Sh. Akiner (ed.), *The Caspian: Politics, Energy and Security*, RoutledgeCurzon, London, 2004, էջ 172:

շահերը ամբողջությամբ չեն համընկնում: Սա գլխավորապես պայմանավորված է Թուրքիայի դիրքորոշմամբ, քանզի վերջինս Կասպից ծովի գազի ներկրման հարցում կարևորում է ոչ միայն հարավկովկասյան, այլև իրանական միջանցքը: 1997 թ. մայիսի 13-ին Թուրքիան Իրանի և Թուրքմենստանի, 2007թ. հուլիսին՝ Իրանի հետ ստորագրել էր փոխըմբռնման հուշագրեր դեպի Թուրքիա և ԵՄ թուրքմենական ու իրանական գազի տարանցման մասին[25]:

Այս առումով հատկապես ուշագրավ է Թուրքիայի և Թուրքմենստանի 2013 թ. մայիսի 30-ի շրջանակային համաձայնագիրը, ըստ որի՝ կողմերը պետք է բանակցություններ վարեն գազի փոխադրման ուղիների ընտրության վերաբերյալ[26]: Այս ամենը հիմք է տալիս պնդելու, որ հարավկովկասյան միջանցքն առնվազն Թուրքիա-Թուրքմենստան հարաբերություններում չէր համարվում թուրքմենական գազի տարանցման հիմնական տարբերակ, հետևաբար այդ նպատակին կարող էր ծառայել հենց Իրանի տարածքը՝ հատկապես անդրկասպյան գազամուղի հարցում առաջընթացի բացակայության դեպքում:

Թուրքիայի մոտեցումը հակասում էր Ադրբեջանի և հատկապես Վրաստանի շահերին: Վերջինս, ի տարբերություն Ադրբեջանի, Թուրքմենստանի հետ չունի վիճահարույց խնդիրներ և մեծապես շահագրգռված է սեփական տարածքով թուրքմենական գազի տարանցմամբ, ինչը կմեծացնի և՛ դրա դիմաց ստացվող եկամուտները, և՛ Վրաստանի դերը ԵՄ-ի կամ Թուրքիայի էներգետիկ անվտանգությունում: Ուստի պատահական չէ, որ 2014 թ. սեպտեմբերին ՀԳՄ-ի հիմնարկեքի արարողության ժամանակ Ի. Ղարիբաշվիլին իր ելույթում ընդգծեց Վրաստանի աջակցությունը անդրկասպյան գազամուղով թուրքմենական գազի արտահանման հեռանկարին[27]: Բացի այդ՝ Վրաստանը այդ հարցը ներգրավեց երկկողմ հարաբերությունների օրակարգում, ինչն արձանագրվեց 2015 թ. հուլիսի 2-ին Թուրքմենստանի և Վրաստանի նախագահների համատեղ հայտարարությունում[28]:

Ադրբեջանի պարագայում խնդրահարույց են ոչ միայն Թուրքմենստանի հետ տարաձայնությունները, այլև Ռուսաստանի հետ եվրոպական շուկայի համար հնարավոր մրցակցության խնդիրը:

---

[25] Տե՛ս Türkiye Büyük Millet Meclisi, Genel Kurul Tutanağı, 20. Dönem 2. Yasama Yılı, 126. Birleşim 24 Temmuz 1997, https://www.tbmm.gov.tr/develop/owa/tutanak_b_sd.birlesim_baslangic_yazici?P4=318&P5=B&page1=33&page2=33 (հասանելի է առ 11.05.2017 թ.); T.C. Enerji ve tabii kaynaklar bakanlığı 2007 yılı faaliyet raporu, էջ 46:

[26] Տե՛ս Framework Agreement on Cooperation between the Government of the Republic of Turkey and the Government of Turkmenistan on the Transportation of Natural Gas from Turkmenistan to the Republic of Turkey, May 30, 2013, Ashgabat, էջ 1:

[27] Տե՛ս პრემიერ-მინისტრი ჰეიდარ ალიევის ცენტრში სიტყვით გამოვიდა, http://gov.ge/index.php?lang_id=GEO&sec_id=380&info_id=44603 (հասանելի է առ 04.05.2017 թ.):

[28] Տե՛ս საქართველოს პრეზიდენტის გიორგი მარგველაშვილისა და თურქმენეთის პრეზიდენტის გურბანგული ბერდიმუჰამედოვის ერთობლივი განცხადება, თბილისი, 2 ივლისი, 2015 წ., https://www.president.gov.ge/ka-GE/pressamsakhuri/siakhleebi/საქართველოს-და-თურქმენეთის-პრეზიდენტების-ერთობლივი.aspx (հասանելի է առ 04.05.2017 թ.):

Անդրկասպյան գազամուղի կառուցման դեպքում ՀԳՄ-ով փոխադրվող գազի ծավալը կարող է հասնել մինչև 60 միլիարդ խմ, մինչդեռ Ռուսաստանի ծրագրած «Թուրքական հոսք» գազամուղով նախատեսվում է Թուրքիա և Հարավարևելյան Եվրոպա տեղափոխել 31 միլիարդ խմ գազ[29]: Ուստի Ադրբեջանը հակված չէ թույլ տալ սեփական տարածքով փոխադրելու այնքան գազ, որ էապես ազդի Եվրոպայի գազային շուկայում Ռուսաստանի դիրքերի վրա, քանի որ դա կարող է լարվածություն առաջացնել ռուս-ադրբեջանական հարաբերություններում:

Եռակողմ էներգետիկ համագործակցությունը ԵՄ-ի և ԱՄՆ-ի շահերի համատեքստում – Թեպետ 1990-ական թթ.-ից ԵՄ-ում հետաքրքրություն կար Կասպից ծովի էներգետիկ ռեսուրսների նկատմամբ, դրանց նշանակությունը ԵՄ-ի համար կտրուկ աճեց 2006 թ. ռուս-ուկրաինական գազային ճգնաժամից հետո: 2007 թ. ընդունված Եվրոպայի էներգետիկ քաղաքականության մասին փաստաթղթում կասպյան էներգետիկ ռեսուրսների փոխադրումը ԵՄ համարվեց «հրամայական», և նույնիսկ առաջարկվեց ստեղծել այդ հարցերով հատուկ համակարգողի պաշտոն, ինչպես նաև համագործակցել Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի և Եվրոպական ներդրումային բանկի հետ՝ անդրկասպյան գազամուղը ֆինանսավորելու նպատակով[30]: Իր էներգետիկ անվտանգությունում ԵՄ-ն աստիճանաբար սկսեց գնահատել նաև Թուրքիա-Վրաստան-Ադրբեջան համագործակցության դերը, ինչն անուղղակիորեն ամրագրվեց ԵՄ-ի հարավկովկասյան քաղաքականության մասին Եվրոպական խորհրդարանի 2008 թ. հունվարի 17-ի բանաձևում, որը ճանաչեց ԲԹԷ և անդրկասպյան գազամուղի նախագծերի կարևորությունը[31]:

Ինչպես տեսանք, Թուրքիա-Վրաստան-Ադրբեջան էներգետիկ համագործակցության սկզբնավորումը և ապագայում անդրկասպյան գազամուղի հաշվին զարգացումը բխում էին հենց ԵՄ էներգետիկ շահերից: 2009 թ. ռուս-ուկրաինական գազային նոր ճգնաժամից հետո ռուսական գազից կախվածությունը նվազեցնելու ձգտումը ԵՄ-ում նպաստեց կասպյան գազի նկատմամբ հետաքրքրության էլ ավելի աճին: ԵՄ-ի ռազմավարական նպատակն է Ադրբեջանի, Թուրքմենստանի և այլ երկրների ներգրավմամբ 2020 թ. ՀԳՄ-ի միջոցով ապահովել ԵՄ գազի սպառման 10-20 %-ը[32]:

---

[29] Տե՛ս **Jarosiewicz A.**, The Southern Gas Corridor: The Azerbaijani-Turkish project becomes part of the game between Russia and the EU, OSW, Warsaw, 2015, էջ 28; **Coote B.**, The Caspian Sea and Southern Gas Corridor: a View from Russia, Atlantic Council, 2017, էջ 15:

[30] Տե՛ս Communication from the Commission to the European Council and the European Parliament, An Energy Policy for Europe, Brussels, 10.1.2007, COM(2007) 1 final, էջ 23-25:

[31] Տե՛ս European Parliament resolution of 17 January 2008 on a more effective EU policy for the South Caucasus: from promises to actions, http://www.europarl.europa.eu/sides/getDoc.do?type=TA&reference=P6-TA-2008-0016&language=EN&ring=A6-2007-0516 (հասանելի է առ 05.05.2017 թ.):

[32] Տե՛ս Communication from the Commission to the European Parliament, the Council, the European Economic and Social Committee and the Committee of the Regions on security of energy supply and international cooperation – "The EU Energy Policy: Engaging with Partners beyond Our Borders", Brussels, 7.9.2011 COM(2011) 539 final, էջ 5:

ՀԳՄ-ի հանդեպ ԵՄ-ում ուրվագծվող քաղաքականությունը նոր ոլորտ հաղորդեց նաև Թուրքիայի, Վրաստանի, Ադրբեջանի էներգետիկ համագործակցությանը: 2009 թ. մայիսի 8-ին ԵՄ Արևելյան գործընկերության մեկնարկի շրջանակներում Պրահայում տեղի ունեցավ հարավային միջանցքի հարցերով գագաթնաժողով, որտեղ Թուրքիան, Վրաստանը, Ադրբեջանը, Եգիպտոսը և ԵՄ-ն ստորագրեցին էներգետիկ ոլորտում համագործակցության դրույթներ պարունակող հռչակագիր[33]: Այս քայլով ԵՄ-ն նաև ցանկանում էր նպաստել այդ ժամանակ դեռևս շարունակվող թուրք-ադրբեջանական գազային խնդիրների կարգավորմանը, որը կարևոր նախապայման էր ՀԳՄ-ի կենսագործման համար:

Հռչակագիրը ստորագրելուց հետո ԵՄ-ն սկսեց ավելի մեծ նախաձեռնողականություն դրսևորել՝ ստեղծելով համագործակցության այնպիսի ձևաչափեր, որոնցում ընդգրկվեցին նաև Թուրքիան, Վրաստանը և Ադրբեջանը: ՀԳՄ-ի կայացման նպատակով ԵՄ-ի և մի շարք պետությունների մասնակցությամբ ստեղծվեց խորհրդակցական խորհուրդ, որի առաջին հանդիպումը կայացավ 2015 թ. փետրվարի 12-ին Բաքվում. ԵՄ-ի, Թուրքիայի, Վրաստանի, Ադրբեջանի և ևս վեց երկրների ներկայացուցիչները ստորագրեցին համատեղ հայտարարություն, որտեղ ընդգծվեց Ադրբեջանի «առաջատար» և Թուրքիայի ու Վրաստանի «հատուկ» դերը կասպյան էներգակիրների փոխադրման գործում[34]:

ՀԳՄ-ում ԵՄ-ի ներգրավվածությունը մեծացնելու տեսանկյունից առանցքային նշանակություն ունեցավ 2015 թ. մայիսի 1-ին Թուրքիայի, Ադրբեջանի, Թուրքմենստանի և ԵՄ-ի միջև էներգետիկ համագործակցության մասին Աշխաբադի հռչակագրի ստորագրումը, որը նախատեսում էր փոխգործակցության ևս մեկ ձևաչափ, այն է՝ էներգետիկայի փոխնախարարների մակարդակով աշխատանքային խմբի ստեղծում, որի աշխատանքներին հրավիրվեց նաև Վրաստանը[35]:

ԵՄ-ի ակտիվ ներգրավվածության շնորհիվ՝ փոխգործակցության այս երկու ձևաչափերը հանգեցրին Թուրքիայի, Վրաստանի և Ադրբեջանի էներգետիկ համագործակցության ինստիտուցիոնալացմանը: Թեպետ դրանցում սկսեցին մասնակցել այլ պետություններ ևս, ակնհայտ է, որ թե՛ այդ ձևաչափերի աշխատանքը, թե՛ առհասարակ կասպյան գազի արտահանումը ԵՄ անհնար կլիներ առանց առաջին հերթին նշված երեք երկրների միջև համագործակցության հաստատման: Ուստիև պատահական չէ, որ խորհրդակցական խորհրդի հանդիպումներում ընդգծվեց Թուրքիայի, Վրաստանի և Ադրբեջանի նշանակությու-

---

[33] Հռչակագրի տեքստը տե՛ս Prague Summit Southern Corridor May 8, 2009, http://www.eu2009.cz/assets/news-and-documents/press-releases/the-declaration---prague-summit--southern-corridor--may-8--2009.pdf (հասանելի է առ 05.05.2017 թ.):

[34] Տե՛ս Southern Gas Corridor Advisory Council Joint Press Statement, Baku, 12 February, 2015, էջ 1:

[35] Տե՛ս Ashgabat Declaration, 1 May, 2015, https://ec.europa.eu/commission/commissioners/2014-2019/sefcovic/announcements/ashgabat-declaration_en (հասանելի է առ 06.05.2017 թ.):

նը: Դրանով փաստորեն ստեղծվեցին հարթակներ, որոնցում վերջիններս էներգետիկայի նախարարությունների մակարդակով սկսեցին պարբերաբար հանդիպել ու քննարկել ՀԳՄ-ին առնչվող հարցեր՝ խթանելով էներգետիկ համագործակցության զարգացումը:

Եթե ԲԹՋ նավթամուղի հարցում ԱՄՆ-ը առանցքային նշանակություն ունեցավ Թուրքիա-Վրաստան-Ադրբեջան համագործակցության կայացման և զարգացման մեջ, ապա ԲԹԷ և անդրկասպյան գազամուղների պարագայում ԱՄՆ-ի ներգրավվածությունը համեմատաբար ավելի պասիվ էր: Ի տարբերություն ԲԹՋ նավթամուղի և Ազերի-Չիրագ-Գյունեշլի հանքավայրի՝ ամերիկյան ոչ մի նավթային ընկերություն ներգրավված չէր Շահ Դենիզի հանքավայրի և ԲԹԷ գազամուղի շահագործման համար ստեղծված կոնսորցիումներում: Պատճառն այն էր, որ դրանցում բաժնեմասեր ունի իրանական պետական նավթային ընկերությունը, հետևաբար Իրանի նկատմամբ ամերիկյան պատժամիջոցների ստեղծած քաղաքական մթնոլորտը թույլ չտվեց, որ ամերիկյան ընկերությունները ընդգրկվեն ադրբեջանական գազի արդյունահանման և արտահանման գործընթացում՝ դրանով սահմանափակելով նաև ԱՄՆ-ի դերը:

Այնուամենայնիվ, Կասպից ծովի գազի արտահանման հարցը մշտապես եղել է ԱՄՆ-ի ուշադրության կենտրոնում: Այս առումով կարևոր էր 2005 թ. մայիսի 25-ին ԱՄՆ-ի, Թուրքիայի, Վրաստանի, Ադրբեջանի և Ղազախստանի միջև Բաքվում ընդունված Արևելք-Արևմուտք էներգետիկ տրանսպորտային միջանցքի զարգացման և ընդլայնման մասին հռչակագիրը: Այս փաստաթղթով ԱՄՆ-ը աջակցություն էր հայտնում ոչ միայն ԲԹՋ նավթամուղին, այլև ԲԹԷ գազամուղին[36]:

Ի տարբերություն ԱՄՆ նախագահներ Բիլ Քլինթոնի և Ջորջ Բուշ Կրտսերի՝ Բարաք Օբամայի վարչակարգի օրոք զգալիորեն նվազեց ԱՄՆ-ի ներգրավվածությունը Կասպից ծովի էներգետիկ խնդիրներում, ինչը քննադատության արժանացավ հենց ԱՄՆ Կոնգրեսում: 2012 թ. դեկտեմբերի 12-ին Սենատի արտաքին հարաբերությունների կոմիտե ներկայացվեց մի զեկույց, որտեղ պետքարտուղարության կողմից 2012 թ.-ից հետո Եվրասիայում էներգետիկ հարցերով հատուկ բանագնացի պաշտոնը թափուր թողնելը խիստ բացասական գնահատական ստացավ: Ավելին՝ զեկույցը ԱՄՆ-ի ղեկավարությանը առաջարկեց Թուրքիայի և ԵՄ-ի հետ ակտիվորեն սատարել անդրկասպյան գազամուղի շուրջ բանակցություններին[37]:

Այսպիսով, կարելի է հանգել հետևյալ եզրակացությունների. նախ՝ Թուրքիա-Վրաստան-Ադրբեջան համագործակցությունը ԲԹԷ գազա-

---

[36] Տե՛ս Baky Declaration on Development and Enhancement of the East-West Energy Transport Corridor, Baku, May 25, 2005, էջ 3-4:

[37] Տե՛ս Energy and Security from the Caspian to Europe, a Minority Staff Report Prepared for the Use of the Committee on Foreign Relations, United States Senate, 112th Congress, 2nd Session, 2012, Washington, էջ 7-8, 28-29:

մուղի շրջանակներում նպաստեց ոչ միայն նշված երկրների միջև հարաբերությունների ամրապնդմանը, այլև նրանց էներգետիկ անվտանգության ապահովմանը և արտաքին քաղաքական մի շարք խնդիրների լուծմանը: Երկրորդ՝ եռակողմ էներգետիկ համագործակցությունը հիմնականում վերընթաց զարգացման միտում է ունեցել և լճացման է ենթարկվել միայն 2008-2010 թթ.: Երրորդ՝ կասպյան գազի արտահանման առումով անդրկասպյան գազամուղի նախագիծը 1990-ական թթ. կազմում էր Թուրքիա-Վրաստան-Ադրբեջան համագործակցության առանցքը և կենսագործման դեպքում էականորեն կնպաստի վերջինիս ռազմավարական նշանակության աճին տարածաշրջանային էներգետիկ գործընթացներում: Չորրորդ՝ անդրկասպյան գազամուղի հարցում Թուրքիան, Վրաստանը և Ադրբեջանը չունեն միասնական դիրքորոշում: Հինգերորդ՝ ԵՄ-ն զգալիորեն նպաստեց էներգետիկ ոլորտում Թուրքիայի, Վրաստանի և Ադրբեջանի հարաբերությունների ակտիվացմանը և ՀԳՄ-ի հարցում համագործակցության ինստիտուցիոնալացմանը, մինչդեռ ԱՄՆ-ի դերը բավականին սահմանափակ էր:

Բանալի բառեր – *Թուրքիա, Վրաստան, Ադրբեջան, Հարավային Կովկաս, Բաքու-Թբիլիսի-Էրզրում գազամուղ, անդրկասպյան գազամուղ, Հարավային գազային միջանցք*

ЭРИК ДАВТЯН – ***Вопрос экспорта каспийского газа в контексте сотрудничества между Турцией, Грузией и Азербайджаном***. – В статье анализируется энергетическое сотрудничество Турции, Грузии и Азербайджана в рамках газопровода Баку-Тбилиси-Эрзурум и его значение для каждого из трех государств. В этой связи рассматривается проект транскаспийского газопровода, существующие по этому поводу проблемы и перспективы трехстороннего сотрудничества. Оценивается влияние ЕС и США на развитие трехстороннего энергетического сотрудничества Турции, Грузии и Азербайджана.

Ключевые слова: *Турция, Грузия, Азербайджан, Южный Кавказ, газопровод Баку-Тбилиси-Эрзурум, Транскаспийский газопровод, Южный газовый коридор*

ERIK DAVTYAN – ***The Issue of the Caspian Gas Exports in the Context of the Turkey-Georgia-Azerbaijan Cooperation***. – The article analyzes the Turkey-Georgia-Azerbaijan energy cooperation under the framework of the Baku-Tbilisi-Erzurum gas pipeline and its importance for each of the three states. In this regard, the research discusses the Trans-Caspian gas pipeline project, related problems and perspectives for the trilateral cooperation. It also assesses the influence of the EU and U.S. on the Turkey-Georgia-Azerbaijan trilateral energy cooperation.

Key words: *Turkey, Georgia, Azerbaijan, South Caucasus, Baku-Tbilisi-Erzurum gas pipeline, Trans-Caspain gas pipeline, Southern Gas Corridor*